



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճեննել և տարածել եյուրը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա եյուրը ստեղծելու համար նորը

You are free to:

Share – copy and redistribute the material in any medium or format


Adapt – remix, transform, and build upon the material

# ՆԱՐ ԹԻԳՐԱԳՐԱԿԱՆ ԲԱՅԳՐՔՈՒՅԿ


(Աւդրագրական բայր եանոննեւով  
յիվ դմկառ բիբլիակի բառերի  
հակիրքի բացատրաբյանը)

Վարուանիում՝ մաս 4400 բառ.

ԿԱԶՄԵՅ, ԴՏԱՆ ԱԼԼՈՅՎԵՐԴՅԱՆ








Ն Ա Ր

ՈՒՂՂԱԳՐԱԿԱՆ  
ԲԱՌԳՐՔՈՒՅՑԿ

(Աղջագրական բոլոր կանոններով և դժվար ըմբռ-  
նելի բառերի հակիրճ բացատրությամբ)

Պարունակում և մոտ 4400 բառ

Կազմեց՝ ՆշԱՆ ԱԼԵՍՎԻՐԴՅԱՆ



ՊԵՏՈԿԱՆ ՀՐԱՏԱՐՈԿՉՈՒԹՅՈՒՆ

Ե Խ Ե Վ Ա - 1 9 8 0

Հրատ. № 1081

ՊԵՏՑՐԱՏԻ ՅԵՐԿՐՈՐԴ ՏՊԱՐԱՆ ՅԵՐԵՎԱՆՈՒՄ

---

Գլուխեղ. № 2794(բ.)      Պատ. № 1376      Տիր. 6000

## ԱՌԱՋԱԲԱՆ

Ուղղագրության հարցը մեր կուլտուրական կյանքի կարեոր խնդիրներից մեկն է։ Փաստ է, վոր մեր աշակերտության, ուսանողության և պաշտոնելության մի մասը լավ չափազետելով հայերենին՝ գըրավոր աշխատանքների ժամանակ ուղղագրական վորոշ գմբարությունների յե հանդիպում։ Դրությունները վոչ միայն լեզվական անկանոնության, անճշտության թերություններով են աչքի ընկնում, այլև տառասխաններով։ Մինչդեռ ամեն մի գրողից պահանջվում է լավ իմանալ ուղղագրությունը։

Մեր գպրոցական հիմնարկները հատուկ ուշագրսություն են դարձնում հայերենի դասավանդության, մասնավորապես հայերենի ուղղագրությունն ընդհանուրի սեփականություն դարձնելու խնդրի վրա։ Վերջինիս հաջող լուծումը պահանջում է հայերենի դասատուներից վոչ միայն առանձին ճիգ ու ջանք, այլև նպատակահարմար մեթոդների գործադրություն՝ ուղղագրությունը հեշտացնելու բոլորին յուրացնել առաջ համար։ Ինչ մեթոդներ ել գործադրվեն գրավոր աշխատանքների ընթացքում, սակայն մի քանի առարգ է, վոր հիշողությամբ չի կարելի աշակերտներին ուղղագրություն սովորեցնել, վորովհետեւ հիշողությամբ գրող անվարժ աշակերտը միշտ կարող է սխալիվել և այլպիսով իր ձեռքը բառերի սխալ գրու-

թյանը վարժեցնել, աչքերը՝ անճիշտ բառապատկերներ տեսնելուն:

Վոչ թե բառերն սխալ զբելու և սխալներն ուղղելու միջոցով պիտի յուրացնել ուղղագրությունը, այլև հենց սկզբից եեթ չսխալվելու, բառերն ուղիղ զբելու ճանապարհով։ Այս տեսակետից ուղղագրական բառդրույկը՝ իրեն օժանդակ միջոց՝ վոչ միայն աշակերտներին մեծ ոգնություն կարող և ցույց տալ դրավոր աշխատանքների ժամանակ, նամանավանդ տնային, այլև բոլոր այն ուսանողներին, պաշտոնյաներին, քաղաքացիներին, վորոնք թերի տիրապետելով հայերենին՝ զբելիս ուղղագրական դժվարությունների յեն հանդիպում։ Հենց այս գործնական նպատակին ծառայելու համար և կաղմված սույն նոր Ռուղղագրական Բառգրեմույկը, վոր բաղկացած և բառարանից յեվ ուղղագրության տեսական մասից։ Բառարանում ընդհանրապես զետեղել եմ գրականության մեջ գործածվող, կամ գործածության մեջ նոր մտած այն հայերեն բառերը, վորոնց գրությունն ուղղագրական վորոշ դժվարությունների հետ և կապված կամ տառերի հնչափոխության հետևանքով, կամ տեղական արտասանության պատճառով։

Յեթե աշակերտը գրում է՝ կրիվ, ագրավ, ամաի, պահման, փոխանակ գրելու՝ կռիվ, ագռավ, ամայի, պայման, սրա պատճառը միմիայն գավառական արտասանությունն և և վոչ թե սխալ զբված տառերի հնչափոխությունը, վորովհետեւ ու և յ տառերի զըստթյունը սույն գեղքում համեմատ և արդարանությանը, ինարկե զբական արտասանությամբ։

Ուղղագրական բառարան կազմողը բառերն ընտրեն իս այս յերկու յերկույթի՝ հնչափոխության և տեղական արտասանության վրա անպայման ուշադրություն պիտի դարձնի: Յեզիր, կ, գ, ք | տ, դ, թ | պ, բ, փ | ը, ո | զ, խ | ծ, ձ | կ, ջ, չ | տառերի ուղղագրության վերաբերմամբ շատ զգուշ եմ յեղել և այդ տառերն ունեցող բառերի մեջ խիստ ընտրություն չեմ կատարել՝ նկատի առնելով թե հնչափոխության և թե դավառական արտասանության հանգամանքները:

Բառարանում տեղ չեն գտել միմիայն այն բառերը, վորոնց ուղղագրությունը վորեե կողմից դըժ-փարություն չի առաջացնում. ինչպես՝ տուն, շուն, ամիս, հունիս, հուլիս և այլն: Այս կարգի բառերով չծանրաբեռնելով բառարանը՝ վերջինս ավելի գործնական է դառնության և դառնության մեջ մտնելը ցանկալի յեւ:

Վորոշ տեղ հատկացրել եմ ոտարազգի բառերին: Մեր ընդհանուր քաղաքական ու կուլտուրական վերելքին զուգընթաց թե գրականության և թե գործնական կյանքի մեջ բնականորեն արդեն մուտք են գործել բազմաթիվ ոտարազգի բառեր: Այս յերեսույթը չի կարելի անտես առնել. բայց պիտի խոստովանվեմ, վոր շատ սահմանափակ թվով բառեր եմ ընարությամբ վերցրել՝ բառարանը շատ չծանրաբեռնելու նպատակով: Հասկանալի յեւ, վոր այս դեպքումն ել բառերի ընտրությանը ուղղագրական տեսակետից եմ մոտեցել:

Բառարանում զետեղել եմ և խորհրդային հանրապետությունների, զանազան կաղմակերպությունների, հիմնարկների, միությունների կրնատ անունները, վորոնք կազմված են բառերի առաջին վանկերից կամ տառերից. ինչպես՝ ժողկոմիորն, Լուսաշխ, ԽՍՀՄ, ՀՈԿ և այլն Վերջապես բառարանում դրել եմ և շատ սահմանափակ թվով հատուկ անուններ, վորոնց ուղղագրությունը վորոշ դժվարությունների հետ և կապված:

Ընդհանրապես դժվարըմբոնելի բոլոր բառերի բացարձությունները տվել եմ Ամեն կերպ աշխատել եմ, վոր բացարձությունները հակիրճ լինեն. սակայն յերբեմն անհնար և յեղել յերկու-յերեք բառով բացարել այս կամ այն բառի իմաստը, նամանավանդ ոտարազգի բառերի Նման գեղքերում գերազանել եմ միքիչ ավելի յերկար բացարձություն տալ, քան բառն անհասկանալի թողնել. Այս ել պիտի շեշտեմ, վոր բառերի միայն կարեվոր նօանակուրյուններն եմ վերցըել և վոչ բոլոր առումները. Դրժվարըմբոնելի բառերի հակիրճ բացարձությունները տալով՝ այս ուղղագրական բառզրույկը վորոշ չափով բացարձական բառզրույկ և դառնում, և այս արել եմ մտածված կերպով: Նախ՝ ուղղագրական տեսակետից բառն աշակերտի համար արժեք և ստանում այն գեղքում, յերբ իմաստի կողմից ըմբռնելի ու հասկանալի յեւ Յերկըորդ՝ մեր աշակերտությունը չունի իր ձեռքում մի հանրամատչելի բառարան՝ ընթերցանության ընթացքում պատահած անծանոթ բառերի իմաստը հասկանալու համար: Դոյրություն

ունեցող հայերեն բառարանները թէ անմատչելի յեն  
և թէ հազվագյուտ։ Դժվարը մը ունելի բառերի հակիրճ  
բացատրությունը առաջիկ նոր Ռուդագրական  
Բառգրեսույկը վորոշ չափով հարստացնելու յե ա-  
շակերտության, ուսանողության բառապաշարը։

Յերբեմն միննույն արմատի կամ բառի դիմացը  
դրված են և նրա ածանցման կամ բարդության զա-  
նազան ձեերը։ Այսպիսի դեպքերում բացատրությու-  
նը միշտ վերաբերում ե բառի առաջին ձեին, վոր  
այբբենական կարգով դրված ե բառերի շարքում։

Բառզրքույկի յերկըրորդ մասում վոչ միայն հա-  
կիրճ պարզաբանված են նոր ուղղագրության հիմ-  
նական սկզբունքները, այլև որինակներով ամփոփ  
լուսաբանված են կետադրության, տողադարձի, բո-  
լոր տառերի, բարդ ու ածանցավոր բառերի, անգամ  
ոտարազգի բառերի գրության վերաբերյալ բոլոր  
խնդիրները։ Այսպիսով բառզրքույկի յերկու մասերը  
մեկը մյուսին լրացնող մի ամրողջություն են կազ-  
մում։ Եթե մեկը տալիս ե ճիշտ բառապատկերներ,  
մյուսը տալիս ե վոչ միայն բառարանում կիրառված  
ուղղագրության, այլև ուղղագրական այլ խնդիրնե-  
րի մասին տեսական ամփոփ գիտելիքներ։

Նոր Ռուդագրական Բառգրեսույկը կազմելիս  
ոգտվել եմ հետեւյալ աղբյուրներից։

### I. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՂԲՑՈՒՐՆԵՐ

- «Առձեռն բառարան հայկագյան լեզվի».
- Ա. Գարտմաճյան.— «Նոր բառզիրք հայերեն  
լեզվի».

3. Հ. Անձառյան.—«Հայերեն արմատական բառարան» (մինչև թառը).
4. Հ. Դաղբասյան.—«Լիակատար բառարան հայերենից ուռւսերեն».
5. Ա. Արեղյան.—«Ուղղագրական բառդրույթ».
6. Մ. Արեղյան.—«Հայոց լեզվի ուղղագրութ» 1892.
7.       »     «Զեկուցում հայոց լեզվի ուղղագրության ոեֆորմի մասին».
8.       »     «Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության».
9.       »     «Ուղղագրական ոեֆորմը».
10.      »     «Աշխարհաբարի շարահյուսություն».
11.      »     «Աշխարհաբարի քերականություն»:  
Բառերի մեծագույն մասն իրենց նշանակություններով վերցընել եմ այսաեղ հիշված բառարաններից, իսկ ուղղագրության համարյա ամբողջ տեսական մասը, յերբեմն բառացի չակերտաների մեջ առնելով, վերցընել եմ Մ. Արեղյանի հիշված յերկերից: Վերջին յերեսութը հասկանալի յեւ Նախ՝ նոր ուղղագրության սկզբունքները ձևակերպված և տեսականորեն հիմնավորված միմիայն Մ. Արեղյանի յերկերում կարելի յեւ գտնելի Յերկըրորդ՝ առհասարակ ուղղագրական խնդիրների վերաբերյալ բացի Մ. Արեղյանի գըրվածքներից, հրապարակում նմուշի համար մի այլ աշխատություն չկատ:
- ## II. ՀՐԱՑՈՒՑԻՉ ԱՂԲՑՈՒՐՆԵՐ
1. И. В. Устинов.—„Новый орфографический справочник“. Москва, 1927.

2. Ф. Шавленков.— „Энциклопедический словарь“.
3. Մ. Հարուրյունյան.— «Բացատրական բառգիրք ոտարադպի բառերի ու դարձվածների».
4. Մ. Արենյան.— «Մուս-հայերեն ռազմական լապարան».
5. «Խորհրդային Հայաստան 1920—1925» (Ժողով.)
6. «Խորհրդային Հայաստան» (որաթերթ).
7. Որենսդրական հանձնաժողով. «Մուս-հայերեն իրավաբանական բառարան».
8. «Հայ-ուսէրեն բառարան յերկաթուղային տերմինների».
9. Տ. Նավասարդյան.— «Բառգիրք Արարատյան բարբառի»:

Առ 1, 2 և 3 աղբյուրներից վերցրել եմ ոտարադպի բառերն իրենց նշանակությամբ: Բացարությունները, նամանավանդ հասարակագիտական, գլուրական ու քաղաքական բառերի, հակիրճ ձևով վերցըրել եմ (յերբեմն բառացի չակերտների մեջ առնելով) Ստիհօն-ի վերև հիշված գրքից, վոր հրատարակել ե Քաղլուսգլխվարը Պետական Գիտական Խորհրդի թույլտվությամբ: Մ. Արենյանի ռազմական բառարանից վերցըրել եմ մոտ 50 ոտարադպի բառերի հայերեն թարգմանությունները:

Առ 5, 6 աղբյուրներից վերցըրել եմ խորհրդային հանրապետությունների, զանազան հիմնարկների, կազմակերպությունների, միությունների, ընկերությունների կրնատ անուններն իրենց բացատրությամբ:

**ԱՅ 7, 8 աղբյուրներից վերցվել եմ նոր բառերը:**  
**Ամեն կերպ ձգտել եմ, վոր այս բառզրքույկը քիչ**  
**պակասություններ ունենաւ: Զգգացած, շնկատած թե-**  
**րություններն ապագայում վերացնելու նպատակով**  
**ուբախությամբ կընդունեմ բոլոր արժեքավոր դիտո-**  
**ղությունները:**

Իվերջո շնորհակալություն Պետհամալսարանի դա-  
 սախսսներ՝ Մ. Աբեղյանին, Հ. Աճառյանին աշխա-  
 տանքներիս ընթացքում ինձ անձամբ ցույց տված  
 վորոշ աջակցության համար:

### Ն. ԱԼԼԱԶՎԵՐԴՅԱՆ

**ԾԱՆՈԹ.—Բառարանի ուղղաձիգ գծերի | | մեջ**  
**դրված գրություններն սիալ չեն, բայց կամ քիչ**  
**գործածական են, կամ գերադասելի չեն:**


---

ՏԱՌԵՐԻ ԱՅԲԲԵՆԱԿԱՆ ԿԱՐԳԸ

*Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է\*), Լ, Թ, Ժ, Ի, Խ, Ծ, Կ,  
Հ, Ձ, Ղ, Ճ, Մ, Յ, Ն, Շ, Ո, Չ, Պ, Ռ, Ս, Վ,  
Տ, Ռ, Ց, Ւ, Փ, Ֆ, Ջ.*

**ԵԱՆՈԹ.**—1. *Է\* տառը 7 կամ 7-րդ նշանակությամբ  
պահվում ե տառերի այրբենական շարքում:*

2. *Ե տառը պահում ե իր 5-րդ նշանակու-  
թյունը. միանգամայն սխալ ե Ե տառի փոխա-  
րեն գրել յե և կարդալ 5-րդ:*



## ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Լեզուն հասարակական-պատմական յերեսույթ է, մի կենդանի որգանիզմ, վոր ժողովրդի կյանքին զուգահեռ միշտ զարդանում, փոփոխության և յենթարկվում և անդրադարձնում հասարակական-արտադրական հարաբերությունները լեզվական մտապատճերների ձևով: Իր հարածուն դարավոր կյանքի ընթացքում մշակվելով, հղկվելով, նորանոր բառեր ու ձեեր իր կազմի մեջ ընդունելով, մեռած, անշունչ տարրերը դուրս վանելով՝ վոչ միայն մարդկային հոգու ամենից նուրբ շարժերը դրսեորելու նուրբ, փարթամ միջոց դառնում, այլև իիստ փոփոխության և յենթարկվում հնչափոխության տեսակետից: Յեվ շնորհիվ վերջին հանդամանքի՝ հնչյունների կենդանի արտասանության և գրության մեջ անցյալում յեղած զուգահեռությունը վերանում է: Վորոշ թվով ձայնավոր և բաղաձայն հնչյուններ փոփոխվելով՝ կամ արտասանությամբ իրար նմանվելով՝ այլևս բառերի մեջ չեն արտասանվում այնպես, ինչպես հեռավոր անցյալում գրվել և արտասանվել են: Այստեղից ել առաջանում են ուղղագրական վորոշ տեսակի դժվարություններ, վորոնց հաղթահարելու, գրել-կարդալու գործը հեշտացնելու և հանրացնելու տեսակետից միակ արմատական միջոցը կարող է համարվել հնչյունների կենդանի արտասանության և գրության զուգահեռությունը: Հասկանալի յե, վոր զանազան լեզվուներում

Հնչափոխությունը տարբեր չափերով և տեղի ունեցել հետեւաբար և այս կողմից ուղղագրական դժվարություններն ել յուրաքանչյուրում տարբեր չափերով են լինում:

Հնչափոխության սույն ընդհանուր յերեսւթից զերծ չի մնացել և հայերենը Մեր ձայնավոր ու բազաձայն հնչյուններն ել վորոշ փոփոխություն են կըել ժամանակի ընթացքում: Հին ժամանակ զրաբարում վորդի, վարդ, ոճ, անգամ բառերը կարգավո՞ղ, ծ, գ տառերը հնչել են այնպես, ինչպես մենք նույն տառերն այժմ հնչում ենք դեպի, դարդ, սանձ, մարգագետին բառերի մեջ. խակ վորդի բառը արտասանել են իբրև որդի: Նույն բառերը մենք այժմ արտասանում ենք իբրև վորդի, վարդ, ոճ, անգամ, չնայած զբում ենք հին ուղղագրությամբ՝ վորդի, վարդ, ոճ, անգամ: Հնում զրել և կարդացել են նուաս (նյաշ), լոյս (լոյս), յատակ (յատակ), խակ մենք այժմ նույն զրությամբ բառերը կարդում ենք իբրև նուաս (ու=վ), լոյս (ոյ=ույ), յեկ հատակ (յ=հ):

Հնչափոխության պատճառով տառերի ուղղագրության մեջ առաջ յեկած դժվարությունները մասամբ վերացնելու, զրել-կարդալու գործը հեշտացնելու և հանրացնելու նպատակներն ե հետապնդում մեր նոր ուղղագրական ռեֆորմը, վորն առայժմ ընդգրկում է միմիայն ձայնավորների, յ կիսածայնի յեկ վրաղաճայնի ուղղագրության խնդիրները, և վորի հիմնական սկզբունքներն են.

Ա. «Ամեն մի հնչյուն միայն մի առանձին նշա-

նագիր պիտի ունենա, և ամեն մի տառ միայն այդ  
մեկ հնչյունի նշանադիրը պետք է լինի. ուստի փոխ-  
ված հնչյունները պետք ե զրել այն տառերով, վոր  
մեր այբրենարանում սկզբից իվեր ընդունված են  
այդ հնչյունների համար։ Ըստ այս պիտի զրել  
ակոս, հանդես, կավ, նվաս, լույս, հատակ, սե-  
նյակ, ամսուրյա, յարն, արյուն և վոչ թե՛ ակոս,  
հանդէս, կառ, նուաս, լոյս, յատակ, սենետկ,  
ամսուր այ, յօրն, արխի ն։

Բ. «Զպիտի զրել այն տառերը, վոր այլես չեն  
արտասանվում»։ ուստի պիտի զրել՝ ծառա, վրա,  
և վոչ թե՛ ծառայ, վրայ։

Գ. «Յերբ բառերի մեջը կամ սկզբում ավելացել  
են նոր հնչյուններ, պետք ե զրության մեջ ել ավե-  
լացնել զրանց համապատասխան տառերը»։ ուստի  
պիտի զրել՝ վարդի, յերես, եյուքյուն, գնալու յիմ  
և վոչ թե՛ որդի, երես, նուքիւն, գնալու նմ։

Ուղղագրական սույն բարեփոխությունների հե-  
տեանքով մեր զրությունը համեմատաբար ավելի յե  
հնչյունական դառնում և ավելի համապատասխանում  
արտասանության, քան առաջ, յերբ աշակերտն ուղ-  
ղագրություն սովորելու համար ստիպված եր յով,  
օռով և է-ով գրվող բառերն անդիր սովորել Սակայն  
նոր ուղղագրական ռեֆորմը, ինչպես ասացի, մա-  
սամբ վերացրեց այն դժվարությունները, վորո՞ք  
առաջացել եյին հնչափոխության հետեանքով։ Բա-  
ղաձայնների (բացի վ հնչյունից) զրության հետ կապ-  
ված դժվարությունները շարունակում են մնալ, վո-  
րովհետեւ զրությունը չի համապատասխանում ար-

տասանության Գրում ենք՝ կենդանի, աղջիկ, բագավոր, ծալկել, ընդհանուր, բայց կարդում ենք՝ կենրանի, ախչիկ, բաժավոր, ծախկել, ընթանուր, այսինքն գրությունը վոչ թե հնչյունական է (վոռ, յես, վրա) այլ պատմական կամ ստուգաբանական։ Սույն բառերը շարունակում ենք գրել այնպես, ինչպես զբվել են անցյալում, և ինչպես պահանջում ե ստուգաբանությունը։ Այս պարագայում վորոշ ոգնություն են հասցնում ուղղագրական կանոնները։ Սակայն ձայնավոր ու բաղաձայն երեսների գրությամբ չի սպառվում ուղղագրության ընդհանուր խնդիրը, վորովիետե այն ընդգրկում ե և բազադրյալ բառերի գրությունը, տողադարձն ու կետադրությունը։

## Ա.

## ՏԱՐԵՐԻ ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

## I. ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՈՒՂԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ա, ի, ու հնչյունների գրությունը միանգամայն համապատասխանում է կենդանի արտասանությանը. ուստի սույն տառերի Պուղղագրությունն առանձին գժվարությունների հետ կապված չի։ Որինակ՝ ուրու, սարահարք, գինի։

## Է, Ծ

Թև բառասկզբում, թե բառամիջում յեվ թե բառավերջում է տառի փոխառեն ամեն դեպքում գրել Ծ, վորի բուն հնչյունն ոկզրից յեվ-

յեր յեղել և է (ռուս. Յ), այդպիս ել պետք և  
արտասանել ու սովորեցնել: Որինակ՝ եյտկ, եյու-  
թյուն, եջ, եսպես, ենքան. զրագետ, թեպետ, խեժ,  
հանգեպ, հանդես. խոսեք, վառեցեք, մի՛ գնեք, ջը-  
րում եյի. ջրորհնեք, արժեք, յուղեղեն, սիզավետ,  
արղեն, հայերեն. մարգարե, մարգարեյական, ըոպե,  
ըոպեյական, գուցե, կտանե, կբերե. Բարգեն, Սու-  
րեն, Վրթանես, Գաբրիել, Թեոդորոս. եներգիա, եվո-  
լյուցիա, եքսպերտ, Եվրիպիդես, Եղիպ:

Եռվ պետք և գրել յեվ այն բառերը, վարոնիք  
միօս Եռվ են գրվել, յեվ վորոնց մեջ Ե տառն  
արտասանվել և իրենվ է, ինչպես՝ վերհ, գերադաս.  
յեկեղեցի, մեռել, կերել. իսկ բառասկզբին Ե-ն  
արտասանվել և իրենվ յերկրարբառ ՅԵ, յեվ  
վերջին ձևվավ ել պետք և գրել՝ յերես, յերեկո,  
յերեսուն:

Այդպիսով է տառը զրության միջից դուրս և  
զցվում և պահպատ և միայն իբրհ թվանշան՝ Դ կամ  
Դ-ը Դ նշանակությամբ:

## Օ, Ո

Օ տառի փսխարեն ամեն դեպքում գրել Ո  
րե՛ բառասկզբում, թե՛ բահամիջում յեվ թե՛  
բառավերջում: Ո-ի բառն հեջյօնը յեղել և Օ,  
այդպիս ել պիտի արջասանել յեվ սովորեցնել:  
Որինակ՝ որիորդ, որորց, ոժիտ, որենք. կարճառոտ,  
վոսկեղոծ, հորանջել, համառոտ. Պադլս, Սոս. ոհոն,  
ծոն, Մարո, Կարութորին ԱԱԱ.

Ո-ով պետք և գրել յեվ այն բառերը, վարոնց

մեջ Ա-ն գրվել յիվ արտասանվել և իբրևի Օ.  
ինչպես՝ սովորել, կով, գոմ, գորով, շոր. իսկ բառա-  
սկզբին Ո տառն աշխարհաբարում սովորաբար ար-  
տասանվել և իբրև վո, բացի ով, ովկիանոս, Թվա-  
զիս, Թվասանա բառերից, վորոնց սկզբի ո-ն  
արտասանվել և իբրև Օ:

Օ տառը ևս զրության միջից դուրս և հանվում:

## Ը

Ը պետք և զրել.

1. Թառասկզբում յիվ բառավելցում. որինակ՝  
ընտանիք, ընկույզ, ընկեր, ընտրել, գիրքը, ծառը, զրի-  
չը, Արամը, Գրիգորը:

2. Թարգ բառերի մեջ, յերբ յերկրորդ բաղա-  
դրիչն սկսվում և Ը-ով. ինչպես՝ որընթաց, Զբրն-  
կեց, դասընկեր, հյուրընկալ, զուգընթաց:

## Ը ԶԻ ԳՐՎԼՈՒՄ

1. Սովորաբար բառամիջում. ինչպես՝ թռնել  
գտնել, Մկրտիչ, գպրոց, թեև արտասանում ենք՝  
թըռնել զըտնել, Մըկըռտիչ, զըպրոց:

2. Թառասկզբում ոկ, սպ, ստ, սֆ, սփ, սր,  
օկ, օպ, օտ, զբ, զգ կապակցություններից ա-  
ռաջ, վորոնց մեջ ը-ն կարճ և արտասանվում. որի-  
նակ՝ սկսել, սպասավոր, ստոծանի, սբողել, սթափ-  
վել զգուշ, զբոսնել, թեև արտասանվում են՝ ըսկսել  
ըզբաղվել և այլն:

3. Թառավերջի Ը ձայնավորի փոխարեն ու-

վարարար և և գրվում, յերբ հաջորդ բառն սկսվում  
և ձայնավորով կամ սկ, սպ, սք, զը և այլն կա-  
պակցություններով. ինչպես՝ գիրքն ընկալ, Սու-  
րիկն ուտում և, ինն ամիս, յոթն անգամ, աշակերտն  
սպասում և, Արամն զբաղված և և այլն.

## II. ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Բառասկզբում բաղաձայն տառերն ընդհանրապես  
պահում են իրենց բուն հնչյունը, և այս տեսակե-  
տից ուղղագրական առանձին դժվարություններ չը-  
կանու Ընդհակառակը՝ բառամիջին բաղաձայնները միշտ  
հանդես չեն դալիս իրենց բուն հնչյուններով, վորից  
և առաջանում են գրության դժվարությունները:

### Յ, Հ

Յ տառի փոխարեն Հ գրել.

1. Բառասկզբում, յերբ Յ-ն արտառանվում է  
իրենվ Հ հնչյուն, Որինակ՝ հեղճեղուկ, հանցանք,  
հատուկ, հատակ, հարդ, հանդուգն. Հակոբ, Հովհան-  
նես, Հուսիկ, հետին, հետ, հետե, հետաղեմ, հետո,  
հեսան, հետաղարձ:

2. Կան մի շարք յ տառով (ի հնչյունով) գրվող  
բառեր, վորոնց բառասկզբի յ-ն հաճախ դուրս ե ընկ-  
նում: Այս կարգի բառերի վերաբերմամբ գրության  
յերկու ձեն ել թույլատրելի յե, այսինքն կարելի յե  
գրել թե ի տառով և թե առանց ի-ի: Որինակ՝  
(հ)արգո, (հ)առաջադիմուրյուն, (հ)աջող, (հ)ի-  
րավի, (հ)ուօիկ, (հ)առաջ, (հ)առաջաբան. նույն-

պես և հատուկ անունները՝ Ակոբ, Ռվանես, Ռիմի  
և այլն:

### Յ ՊԵՏՔ Ե ԳՐԵԼ

1. Թառամիջում յեզ բառավերջում Ա., Ո  
ճայնավորներից հետո, յերբ յ տառն արտասահ-  
վում և իր բուն հնչյունով՝ իբրևի կիսաձայն  
կամ բաղաձայնական ի (լատ. յ, ռուս. ն): Որի-  
նակ՝ Հայաստան, այս, հայություն, փայփայել. հայ,  
վայ, բայ, ճայ, խոյ:

2. Վորոշ թվով բառերի սկզբում յ տառն արտա-  
սանվում և թե իբրև ի և թե իր բուն հնչյունով՝  
իբրև կիսաձայն ի (ռուս. ն), նամանավանդ բարբառ-  
ներում: Այս պատճառով գրության յերկու ձեն ել  
դոյցություն ունի: Դերադասելի յե կիսաձայն յ-ով (ն)՝  
գրությունը հ-ով գրությունից: ինչպես՝ յնտ դառ-  
նալ, յետո, յետին, յետան, յետադարձ, յետամնաց,  
յետեվ և այլն: Սույն դեպքում յ տառն արտասահ-  
վում և իր բուն հնչյունով՝ իբրև կիսաձայն ի (ն):

3. «Ե տառից հետո բառերի միջում ավելաց-  
վում և յ տառը, յերբ յետեվից մի ճայնավոր և  
գալիս»: Որինակ՝ գործունեյություն, բոպեյական,  
բոպեյով. բագեյի, խոսեյի, նստում եյին և այլն:

4. «Ե տառից առաջ բառերի սկզբում ավել-  
լացվում և անկայուն յ տառն ամեն անգամ,  
յերբ արտասահնվում եա: Որինակ՝ Ցերեան, Ցերու-  
սագեմ, յերես, յերեկո, յերկաթ, յերեսուն, յերգ և  
այլն:

5. Եմ բայի Շերկայի ձևվերի վրա ավելաց-

վում և յ տառը, յերբ այդ միավանկ ձերբն «իբրև վերջահար բառ սերտ կերպով միանում են ձայնափորվ վերջացած նախորդ բառին»։ Որինակ՝ խոսելու յեմ, խոսելու յես, խոսելու յե. յերգելու յենք, յերգելու յեք, յերգելու յեն, բարի յեմ, հողի յես, հայտնի յեն և այլն։ Օ տառը չի ավելացվում, յերբ նախորդ բառը վերջանում ե բարձամայնով, վորովհետեւ թե առաջին և թե յերկրորդ գեղքում զրությունը համեմատ ե արտասանությանը։ Որինակ՝ զրունում եմ, զրունում ես, զրունում են։ քնում ենք, քնում եք, քնում են։

### Յ ԶՊԵՏՔ Ե ԳՐԵԼ

1. Բառավերջում Ա., Ռ ձայնավորներից յետո, յերբ չի արտասանվում. ինչպես՝ ծառա, զրա, յերեկո, յետո և այլն։

2. Ե-ից յետո, յերբ չի արտասանվում. ինչպես՝ լեզեռն, հոգեառ, իզեա, ոեալ, Թաղեռս, Մատթեոս (յերբ վերջինները չենք արտասանում իբրև Թաղեղոս, Մատթեոս)։

3. Բառակազմուրյան ժամանակ կամ ԿԲ, ԶԸ մասնիկներից յետո՝ յերբ չի արտասանվում. ինչպես՝ յերես—աներես, մակերես, յերեռոյթ—մակերեռոյթ, յեզր—գետեզր, յերանգ—բազմերանգ, յեկավ—չեկավ, յերեա—կերեա և այլն։

Ա, Ի, ՈՒ

Ա, ԳՐԵԼ

1. Ամեն դեպքում Խ-ի փոխարեն, յեր և տառն արտասանվում է իրենի Վ. Որինակ՝ թիվ, հովիզ, ծից, կալ, հալ, ավաղ:

2. Ամեն դեպքում ՌԽ-ի փոխարեն, յեր ուն արտասանվում է իրենի Վ. ինչպես՝ նվազ, նվեր, դրվագ, որվեր թխվել, մանվածք, գործվածք. կտտու—կատվի, բու—բվի, վերարկու—վերարկվի:

3. Բառատակզրում Ձ տառից տռաջ, յեր արտասանվում է. որինակ՝ վորդի, վորսորդ, վոտ, վողկույզ, վորմնազիր, վորպեսզի, վորովհետեւ և այլն:

4. Վ. հեջյունն ամեն դեպքում նշանագրել Ա տառով. ինչպես՝ վարդ, վարունգ, հով, սով, վեղուզ, լուվը:

Վ ԶԳՐԵԼ

Բառակազմության ժամանակ կամ կը, չը մասնիկներից հետո, յեր չի արտասանվում. ինչպես՝ վորոշ—պարզորոշ, վոտ—անոտ, վոչոք, կողջունին, չողեորվի և այլն:

ՈՒ

Ամեն դեպքում Ձւ գրել, յեր Ձւ կտայակցությունն արտասանվում է իրենի ձայնավորու (ոռւս. Ս). որինակ՝ ուրու, ձու, վաշխառու, բուրժուա, կառւրա, կուիզա և այլն:

## Ա

Ի տառք գրել ու կապակցության մեջ իրեն  
ՌԵ-ի մի մաս. իսկ իբրև առանձին տառ իր ու-  
րույն հնչյունով՝ զործածությունից հանվում է:

## Կ

Այս նշանագիրը կազմված է են, և տառերի միու-  
թյունից, վորով նշանագրվում է յերեք հնչյուն՝ յ,  
ե, վ կամ բաղաձայնից հետո՝ ե, վ. ինչպես՝ նահ-  
=նայել, եւրե=եւրել, իբրև սղագրության նշան  
պահվում է. որինակ՝ ձեզ կամ ձեւ, արել կամ արե,  
միյեվնույն կամ միննույն և այլն. Տողադարձի ժա-  
մանակ պետք է գրել եվ՝ տերե-վի, արե-վի:

## Դ, Մ

Պ, թ, փ որբնային տառերից առաջ միօտ Մ  
գրել, վոր յերբեմն իբրև ն և արտասանվում. ինչպես՝  
ամբարիշտ, ամբար, ամփոփ, ամպ, ումպետ:

Սույն շրթնայիններից առաջ ան նախածանցը  
ողահում է իր ն-ով զրությունը. որինակ՝ անպատ,  
անփույր. անբուժելի: Հստ այսմ գրել անբիծ և  
վոչ թէ ամբիծ:

## Ղ, Խ

Բաղաձայնից առաջ խ տառը գրել հետեւյալ բա-  
ռերի մեջ՝ ախտ (ցավ), անխախտ, տպուխտ, բախտ,  
դուխտ (Սանդուխտ), յերախտիք, վորից՝ ապերախտ,  
զմռուխտ, ժխտել, ուխտ, պանդուխտ, վախճան,

դրախտ, լախտ, տախտակ, տախտ, Բացի այս բառերից՝ մնացած բոլոր բառերի արմատական ձեր մեջ բաղաձայն տառերից առաջ զրվում ե դ, վոր սովորաբար իս և արտասանվում. ինչպես՝ վողը, աղջիկ կեղս, յեղբայր, խեղձ, բուղը և այլն:

**ԾԱՆՈԹ. 1.** — Թե՛ս ստուգաբանական և թե՛ս բարեհնչունության տեսակետից խուսափել դիմի իրար մոտ զրությունից հետեւյալ բառերի մեջ. բխել (արմատը՝ բուխ), բախել (արմատը՝ բախ), ծխնի, զիխ և վոչ թե բդիել, բադիխել, ծղխնի, զեղիխ. Հստ այսմ զրել՝ հսգերուխ, սրաբուխ, իրաբուխ, բարախել (կազմված՝ բախ-բախ-բախ-ել).

**ԾԱՆՈԹ. 2.** — Միշտ զրել բախտ և վոչ թե բադդ, վոր սխալ զրության հետեւանքով և տարածված:

### Ա, Բ

Բաղաձայններից առաջ բ-ն հաճախ արտասանվում և իբրև ո, վորից և առաջանում ե զրության դժվարությունը. ինչպես՝ բարդ, դարդ, արծար, արծիվ, արտ: Տեղական արտասանությամբ սույն հընչյունների շփոթությունը և սխալ զրությունը սովորական յերեւյթ ե: Որինակ՝ գրում են՝ կրիվ, ագրավ և այլն:

Տառերի արմատների մեջ ն տառից առաջ գըրգում ե ո. ինչպես՝ բառնալ, դառնալ, խառնել, դռնապան, ամառնային, իսկ մնացած բաղաձայններից առաջ՝ բ. որինակ՝ վարդ, կարգ, կերտել, գործ, բարձր և այլն:

Այս տեսակետից բացառություն են կազմում  
ուռիօն, ուռձանալ, հուռքի, խոպոտ բառերը:

Նորից առաջ ո, ինչպես և մյուս բաղաձայններից  
առաջ ո կարող ե ընկնել ածանցման ու բարդության  
գեղաքում, ոյերբ յերկու բաղաձայնի միջից մի ձայ-  
նավոր և դուրս ընկնում, կամ յերկու առանձին բա-  
ղադրիչ մասեր են միանում: Որինակ՝ գար(ու)նա-  
նային, վեր(ի)նատուն, առ(ի)րիվ, պառ(ի)կել,  
գոռգոռալ, ծռվիզ, կառ(ի), փառ(ի) և այլն:

Առաջին ի յե փոխվում այն ժամանակ, յերբ հե-  
ռանում ե արմատական Ա-ից, որինակ՝ ձմեռ(ն)–  
ձմերանոց, տմառ(ն)–տմարանոց, դուռ(ն)–  
դրան, լեռ(ն)–լեռան, բայց ավելի լավ և զրել  
ու-ով, վորովհետեւ զրության այս ձեն ավելի հատուկ  
ե աշխարհաբարին և ավելի մոտ արմատին:

Արմատի կրկնությամբ կազմված բարդ բառերի  
մեջ «առաջին ուն բաղաձայնից առաջ ընկնելով  
ո ի յե փոխվում. ինչպես՝ բարբառ, կարկառ,  
գրգիռ, մրմուռ, բրբռալ, կրկռալ»:

«Նմանաձայնություն ցույց տվող այդպիսի կըր-  
կընված բառերի մեջ յերկու արմատն ել ու-ով կա-  
րելի յե զրել: յերբ ձայնի սաստկություն ե ցույց  
տալիս. ինչպես՝ մոմուալ, բորուալ, ծռձուալ, գոռ-  
զուալ»:

**ԾԱՆՈԹ.**—Առ հնչյունը ո հնչյունի թանձր,  
կրկնակին լինելով՝ վորոշ թվով բառերի մեջ  
զրվում ե յերկու ո-ի փոխարեն. ինչպես՝ տարր=  
տառ, յերր=յեռ, յերրակի=յեռակի, յերրյակ=  
=յեռյակ; Գերաղասելով ո-ով գրությունը՝ սույն  
բառերը ու-ով ել զրված են բառարանում:

## ‘Օ, Զ’

Բացի ոն բառից՝ ձայնավորներից հետո ձևի զըրպում, այլ ծ կամ ց, ինչպես՝ կոծել, ոծել, տծանց, մնաց, մատնոց, խուց. իսկ բառամիջում եւ բառավերջում ր, դ, ն բաղաձայններից հետո՝միայն ձ կարսղ եւ զրվել. որինակ՝ ձորձ, գանձ, բաղձանք, բարձ, անձուի:

## ‘Թ, Ա, Ց, Մ, Ճ յիվ Թ, Գ, Դ, Զ’

Հնչափոխության հետեանքով պայթուցիկ հընչյուններից խուլերը՝ պ, ս, կ, ծ, ձ, հազարային հ հնչյունի հետ միանալով տալիս են պայթուցիկ ձայնեղներ՝ թ, գ, դ, ջ. վերջինները հազարային հի հետ միանալով՝ տալիս են պայթուցիկ թավ խուլեր՝ փ, թ, բ, ց, չ. Բատ այսմ հնչափոխությամբ՝ 1. պ, կ, ս, ծ, ձ խուլերը ն, մ, յերբեմն բ հնչյուններից հետո հաճախ արտասանվում են իբրև թ, գ, դ, ջ. Ինչպես՝ ամպ (ամբ), ընտանիք (ընդանիք), ընկերել (ընդել), ձանձ (ձանջ), կոնծել (կոնծել), հարկավոր (հարգավոր):

2. Թ, գ, դ, ջ ձայնեղները այ, ոյ յերկրարբաններից, ձայնավորներից, բ, վ բաղաձայններից հետո արտասանվում են իբրև փ, բ, թ, ց, չ թավ խուլեր. որինակ՝ աղբյուր (աղփյուր), հազուս (հսկուս), վարդ (վարք), արջ (արչ), հազել (հսչել), վարձ (վարց), դարձ (դարց):

Սույն առաերի ուղղագրությունը միայն վարժությամբ կարելի յեւ սովորել, վորավհետեւ հասուկ ուղղագրական կանոններ չկան: Սրա հետ միաժամա-

նակ պիտի շեշտել, վոր խուլերի և ձայնեղների հըն-  
չափոխությունը, առանձնապես խովերինը, աղդել  
և ուղղագրության վրաւ Շատ բառեր զրության կըր-  
կին ձեռք ունեն, ինչպես՝ խառնաբնդոր, խառ-  
նափնդոր, գայրագղել, գայրակղել, բանդ, բան,  
բժիշ, բջիշ, կղմիներ, կղմինդր, անընդել (ան-  
ընդ-ելանել), անընել, յերդիք, յերդիկ, հաջել,  
հաչել, առեջք, առեջք, ժանգ, ժանկ, բեկ, բեզ,  
սանցր, սանցր, խնձույք, խնջույք, կինձ, կինջ  
և այլն; իհարկե, ուղղագրությունը կշահեր, արտա-  
սանության և զրության մեջ զուգանեռություն կլի-  
ներ, յեթե սույն կարգի բառերի զրության կրկին  
ձեռքից միշտ այն ընտրվեր, վոր համապատասխան  
կլիներ արտասանությանը: Որինակ՝ միշտ զբեյինք՝  
անընդել, գայրագղվել, բանդ, վոր և ստուգաբար-  
նորեն ճիշտ կլիներ, խնջույք, վանգ և վոչ թե՝ ան-  
ընել, գայրակղվել, բան, խնձույք, վանկ Մինչ-  
դեռ, մենք զիտենք, զրության սույն ձեռքից՝ ան-  
ընել, գայրակղվել, վանկ տիրապետում են ուղ-  
ղագրության մեջ, իսկ բան, խնձույք, բեկ ավելի  
տարածված և ընդհանրացած: Այս փաստերը ցույց  
են տալիս, վոր ուղղագրական խնդիրները հաճախ  
լուծվում են և իրական փաստ զառնում վոչ թե ըստ  
զիտական ավյաների, ըստ բանականության, այլ  
ըստ սպառույթի ուժի: Սույն յերկույթը նկատի  
առնելով՝ բառարանի մեջ գերազանել եմ բառերի զը-  
րության կրկին ձեռքից ան, ինչ ընդհանրացած ե  
կամ գերակօռում ե, թեկուզ յերբեմն ստուգաբար-  
նորեն սխալ և հաճախ անհամապատասխան մեր ար-

տասանությանը. ինչպես՝ անընտել, գայրակղվել, բանի և այլն: Խսկ յեթե այս յերեռւթը գոլություն չունի, այն ժամանակ բառերի գրության կրկին ձեփերից այն գերադասել և ընտրել, վոր համապատասխան կլինի արտասանությանը Այսպես գերադասելի յե՛ հաչել, բջիջ, ժանգ, գունդ, բանգ, սանդր, կղմինդր, հնձան, խառնափնքոր, խնձոր, ընձյուղ, խրճանալ, հեխ, քառուն և այն, քան՝ հաջել, բձիծ, ժանկ, գունս, կղմինդր, խառնաբնդոր, խնձոր... ձեռը:

### III. ՅԵՐԿՐԱՐՔԱՌՆԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

#### ԵՍ, ԵՕ, ՖԻ

Այս յերկրարքառերի մեջ ե, ի տառերն արտասանվում են իբրև բաղաձայնական ի կամ յ (ոռւս. ն). ուստի յա, յօ, իւ յերկրարքառերի փոխարեն պետք ե գըել յա, յօ, յու. ինչպես՝ տասնյակ, հնդյակ, պաշտոնյա, համարյա, մետաղյա. Դրիգորյան, Վարդանյան. քաջության, փոքրության, զգուշությամբ, քաջությամբ. յար, Յաղոնիա, արդյոք, կարծյոր, յոթ: Յուղ, յուր, բյուր, թյուր, լավություն, հյուսել, մյուս և այլն:

Իւ յերկրարքառի փոխարեն ի գըել բոլոր դեպքերում, յեթե ի ձայնավորն արդեն փոխարինել ե կամ սկսել ե փոխարինել իւ յերկրարքառին, նամանավանդ հունարենից առնված բառերի մեջ: Որինակ՝ օսփիլա, լարիրինքոս, կիրակի, հիպատոս, միրոս, Ծեգիպտոս, Փինիկիա և վոչ թե՝ օսփիլ-

դա, լաբյուրինքոս, կյուրակի, հյուպատոս, մյուրաս և այլն:

Բա, իե, իո, իու կապակցությունները սովորաբար արտասանվում են կամ իբրև իյա, իյե, իյո, իյու. ինչպես՝ թիյավարել, Գարբիյել, որիյորդ, միյուրյուն և այլն, կամ իբրև յա, յե, յո, յու. ինչպես՝ թյավարել, Գարբյել, որյօրդ, մյուրյուն, Բանաստեղծներն այսպիսի բառերը հաճախ մի վանկով ավել կամ պակաս են վերցնում. ինչպես՝ միյա-նալ կամ մյա-նալ, Դրության միաձեռնության տեսակետից այս բառերի վերաբերմբ պահվում են ինուղղագրությունը. որինակ՝ թիյավարել, Գարբիել, որիորդ, միություն, տիեզերք, քանիերորդ, միայն, եներգիա, միլիցիա, միլիոն, եվոլուցիա, լաբորատորիա. Ասիա, Գերմանիա, Ավստրալիա և այլն:

## ՈՅ

Ոյ յերկբարբառը յերբ արտասանվում ե իբրև ույ, նման գեպքերում ո-ի փոխարեն գրել ու. ինչպես՝ լույս, կույս, ծույլ, կույր; Վոր բառերի մեջ ոյ կապակցությունն արտասանվում ե իբրև պարզ հնչյուն ու, այդպես ել պետք ե գրել. որինակ՝ ըզգուս, մերաւս, անուս, ուժ, աշխաժ, վիրարուժ, գուժ, ձկաւր, բաւն, բուք (մատ), սառուց և վոչ ծանրաբեռնված ձեռվ՝ զգույս, անույս, ույժ..և այլն:

Ոյ գրել, յերբ արտասանվում ե իբրև օյ (ռուսէ բեն օյ). ինչպես՝ իոյ, նոյ!

#### IV. ՈՏԱՐԱԶԳԻ ԲԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

**Ոտարազգի բառերի ուղղագրության համար նը-  
կատի ունենալ.**

1. **Ոտարազգի ամեն մի հնչյուն պետք է տշխա-  
տել հայերենի համապատասխան հնչյունն ունեցող  
նշանագրով նշանակել վոր բառի հայերեն գրության  
արտասանությունը մոտ լինի այն լեզվի արտասա-  
նությանը, վորից առնված է տվյալ բառը:**

2. **Ոտարազգի բառը բառասկզբում սովորա-  
բար առաւաղարձվում է ո նշանագրով, բառամիջում  
և բառավերջում՝ բառով: Այս այսմ պետք է գրել՝  
ունալ, ունալիքմ, ունման, ունմանիզմ, ունզու-  
ցիա, պրոգրես, պրօֆեսոր:**

3. **Հայերենին հատուկ չե, վոր միենույն բառի  
մեջ վորեւ հնչյուն, լինի ձայնավոր թե բաղաձայն,  
յետե-յետե կրկնվի: Այդ կարող է պատահել բար-  
դության կամ ածանցման ժամանակը յերբ ոյերկու-  
տառանձին արմատներ միանում են, կամ վանկի մի-  
ջից մի ձայնավոր կորչում եա: Որինակ՝ ամենա-ազ-  
նիվ, յեր-րորդ, չոր-րորդ (յեր, չոր արմատ, րորդ  
ածանց), բնենել, զնենել (բնին, զնին արմատ): Կան  
բառեր, փորոնց մեջ միենույն տառը յետե-յետե  
կրկնվում է, ինչպես՝ զգվել, դդում, տարր, ան-  
գորր և այլն. սակայն չպիտի շփոթել տառի կրկնու-  
թյունը հնչյունի կրկնության հետ, վորովհետեւ ար-  
տասանելիս յերկու միենույն հնչյունի մեջ մտնում  
է ը ձայնավորը, վոր չի գրվում: Այս պատճառով  
ել ոտարազգի անունների մի մասը հայերենում տ-**

ուանց հնչյունների կրկնության են զրգել. ինչպես՝ Թագիոս, Ապօլոն (Ապօլոն), Թիստալիս և վոչ թէ՝ Թագիկոս, Ապօլոն, Թիսալիս, ինչպես և զրգում են ստար լեզուներում: Կան բառեր, վորոնց մեջ պահպած և հայերենում հնչյունի կրկնությունը. այսպես Աննա, Փիլիպպոս, ուարքի: Առհասարակ ուղղագրական սույն խնդրում զեկավար սկզբունքը պիտի լինիք արտասանությունը: Ցեթե հայերենում արտասանության ժամանակ վորեն հընչյուն յետեն-յետեն չի կրկնվում, ապա տվյալ բառի զրության մեջ ել վորեն տառ չպիտի կրկնվի. որինակ՝ կոմունա, ուղղողիցիս, պրոֆեսոր, կոմիսիա, միսիա, ոկուլացիս, ոպորտունիս, կոլեկտիվ, կոլեգիա, պեսիմիս, կոլեգ, պալիատիկ և այլն. խեկցիուն յեթե արտասանության ժամանակ վորեն հնչյուն կրկնվում ե, ապա տվյալ բառի զրության ժամանակ ել համապատասխան նշանագիրը պիտի կրկնել. ինչպես՝ մասսա, կասսա, Շիլլեր, Մոռ, Քարքի, կոռպերացիս:

Բառավերջում հնչյունի կրկնությունը և համապատասխան զրությունը թույլատրելի չե. որինակ չի կաշելի գրել՝ պրոցես, պրոգրես, պրոգրամմ, եպիգրամմ, Գրիմմ, այլ պետք ե գրել պրոցես, պրոգրամ, պրիգրամ, Գրիմ:

4. Լատինական Խ-ը (սուս. ՀԸ) տառապարձվում է բա տառերով, վոր համեմատ ե թէ Խ տառի արտասանությանը և թէ մեր: Բացի այս՝ և առնասարակ արտասանության տեսակետից միշտ գերադասելի յէ ոտարազգի բառերի զրության մեջ ս-ից տառջ կ-ն

տառադարձել թով, քան կով։ Ըստ այսմ զրել՝ Եմս-կուրսիա, Եմսպեղիցիա, Եմսպերփմենս, Եմսպեր, Եմսազ, Եմսպանսիվ, մահսիմում, տախա և վոչ թե՛ եկսկուրսիա, Եկսպեղիցիա.... և այլն։

5. Ոտարազգի փափուկ լ-ն (լ, ո՞) տառադարձելիս՝ հնչյունական գրության տեսակետից չի կարելի լ տառին հաջորդող ձայնավորից առաջ ավելացնել Յ կիսաձայնը, վորովհետեւ վերջինս վորոշ հնչյունի նըշանագիր ե, և այդ հնչյունը մի ձայնավորի հետ միանալով՝ կազմում ե յերկբարբառ։ Հետեաբար սույն դեպքում յ տառով վոչ թե լ-ի փափկությունն ենըշանագրվում, այլ անվանկային յ հնչյունը, վոր սույն դեպքում գոյություն չունի. ուստի և «մի հնչյունին մի գիր» սկզբունքի տեսակետից թույլատրելի չի շեղած հնչյունի համար բառի մեջ մի ավելորդ տառ մտցնելը։ Ըստ այսմ պետք ե զրել՝ Եվուցիա, ուեզուցիա, ուեվուցիա և վոչ թե Եվուլյուցիա, ուեվուլյուցիա, ուեվույուցիա։ Այս ձեռվ չեն գրվում և ոտար լեզուներում։ Յեթե ուսւները գրում են՝ эволюция, резолюция, революция, այս բառերի մեջ յօ-ն չի նշանակում յ+յ (յ+ու)։ Բաղաձայններից հետո ուսւական Յ, Ա, Յ տառերից յուրաքանչյուրն արտահայտում ե նախորդ բաղաձայնի փափկուրյունը և նրան հաջորդող Յ, Ա, Յ ձայնավորներից մեկը։

Այս հիմունքով և նախընթաց ձայնավորից հետո յել չի կարելի յ գրել՝ լ-ի փափկությունը նշանագրելու համար։ Վոչ թե պայտո, ամայլգամ, մեդայի, այլ պալտո, ամալգամ, մեդալ։

Այս փափկությունը նշանազրելու համար ավելի յագ և է տառի զլիսին ստորակետի պես մի բան զբար, քան բառի մեջ անտեղի կերպով չ տառն ավելացնել:

6. Հայոց յեզրի հնչարանությունը՝ ա, ո ձայնավորներից հետո պետք է դրել չ ձայնակաղը, յեթե որանց հաջորդում են ձայնավորներ, ինչպես Տրոյա, Էտ-Ֆայես, պոյես, եղոյիս, պրոցելս:

Ը ձայնակաղի փոխարեն յերբեմն յերկու ձայնավորների մեջ մասում է վ. քիչ անգամ և ձայնակաղը, որինակ՝ ո-վ-ազիս, տը-վ-ազա, Սա-վ-ուլ. Արքա-հ-ամ: Իսկ յեթե ոտար բառերը չեն յենթարկում մեր հնչափոխությանը, այն ժամանակ իրոք հաջորդող ձայնավորների մեջ կարելի յե չ ձայնակաղը չգրել. ինչպես Թուա, Կակաս, Կլոուն:

7. Լատինական թի տառաղարձել թ տառով. մարդաբանիկա, Խորեսիկա, քարոն, քեռեմ, քեռիա:

#### Վ. ՄԵԾԱՏԱՌԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ

##### Միծառառվ գրել.

1. Մարդկանց անունները և նրանցից անբաժան մականունները, ինեն հասարակ անուն, ածական թե թվական, ինչպես Հակոբ, Պելոս, Անոս Օհրեկար, Մովսես Խորենացի, Լեզոս Ավելուրը:

2. Աշխարհազրական անունները՝ Հայոստան, Ծիրելվան, Արտօս, Մատիս, Հրազդան:

Ցեթե անունը կազմված է յերկու բառից, ածականը մեծատառով և զրվում, իսկ գոյականը՝ փոք-

բառառով, յեթե ընդհանուր մտքով և վերցված, այսինքն՝ ցուց և տալիս այն աեսակը, վորին պատկանում և ավյալ առարկան։ Արինակ՝ Սիվ ծով, Կասպից ծով, Ծերևափանի գավառ, Ազգան լեռներ։ Իսկ յեթե զոյականն ընդհանուր մտքով չի զործածված, այն ժամանակ թե ածականը և թե զոյականը զլխառառվ են զրվում, ինչպես՝ Կոր Դյուլ:

3. Գրքերի, պարբերականների, որոթերթերի տնօւնները՝ Խենք, Քառ, Կոր, Ավանդությ, Խորհրդաշին Հայոստան։

4. Քաղաքավարական զրության մեջ՝ Պուր, Զեր և այլն բառերն ու տիտղոսները։

5. Ասացվածների, ուզզակի խոսրի, վոտանավո՛ր և տողերի առաջին բառերը։

6. Հիմնարկների, հաստատությունների, ընկերությունների, միտիյունների անունները, ինչպես՝ Լուսավորուրյան Փալովշդական Կոմիսարիատ, Լուսավորուրյան Աօփառավորմերի Աշեմբուրբա, Արէիստի յիվ Կիբուրյան Ենսէյտուս և այլն։

7. Փողոցների, շինությունների, կամուրջների, նավերի և այլն անունները։

Բ.

**ԲԱՐԱԿՐՅԱԼ, ԸՆԹԱՐԻ ՈՒՂԱՎԱՐԱ-  
ԹՅՈՒՆԸ**

Բաղադրյալ բառերը յերկու աեսակ են լինում՝ բարդ յիվ ածանցական։

### I. ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Բարդ բառերն ըստ ձեի յերեք տեսակ են՝ խոկական բարդ բառեր, անխոկական բարդ բառեր և հարաբերակ բառեր:

### II. ԽՈԿԱԿԱՆ ԲԱՐԴ ԲԱՌԵՐ

1. «Խոկական» բարդ բառերի յերկու բաղադրիչ մասերն իբար միացած են զրվում և ըստ խմատի, ըստ մի բառ են կազմում՝ պահելով ձայնափոխության և հոգակապի կանոնները։ Ինչպես՝ մասվածառ, գրատախտակ, արագավագ։

2. «Խոկական» բարդության գեղքում առ հոգակապը չի զրվում, յերբ յերկրորդ բաղադրիչ մասը ձայնափորով է սկսվում. որինակ՝ դասընկեր, բանահաման, լուսանցք։

3. Ձայնավորից առաջ առ հոգակապ զրվում է, ոյերը առաջին բաղադրիչ մասն և ամեն բառը, իսկ յերկրորդ բաղադրիչն և մի աճական, վոր ամեն բառի հետ բարզվելով ստանում է զերադրական տառիձանի խմատ։ Որինակ՝ ամենազենիվ, ամենաարագ։

4. Յերբ առաջին բաղադրիչը բազմավանկ է և զերջանում է ի ձայնավորով, վերջինս առ հոգակապի հետ կազմում է յա (չեա) յերկրորրառ, վոր և բառն աճելիս դառնում է ի ու ու, ինակ՝ վարդի-տ-սեր-սպուշիներ, գինի-տ-վահան-զինեվահան, բարի-տ-կամ-բարեկամ։ Սույն ձայնափոխությունը միավանկ է վորոշ թվով բազմավանկ բառերի վրա չի աղջում, ինչպես՝ կողինաշնակ, միանոր, ձիւ տիմ։

5. Կան բառեր, վորոնց ա հողակապը սղվել է և զրվում են տանց հողակապի՝ հացքուխ, ջրիիր, ուսաս, ձեռնուու, արյունիվա, կարելի՝ յե և ավերացնելի՝ հացարուխ, ուսաս, ձեռնուու, արյունավա:

## 2. Անիսկական բարդ բառեր

«Անիսկական բարդ բառերի բաղադրիչ մասերը միացած են զրվում իրրե մի բառ, բայց զրանք պատահական բարդություններ են, ուստի և չեն պահաւմ հողակապի, յերբեմն և ձայնափոխության կանոնները: Այս կարգի բառերի մի մասը զրվում էն յերբեմն և իրրե յերկու բառ»:

## Միացած գրել

1. Հետեյոլ զերանունները, մակրայնները և շաղոկապները՝ վորպիսզի, վոչոմ, յեմիր, մեկմեկու, մըրք, միանգամայն, այրու, ամենուրեմ, նայե՛մ, նումանավանդ, այնուամենաշնիվ, գրերե, այնաշենել, զորորինակ, յել այն, այսպիս, արյունի, նույնպիս, վորպիս, իմշալի և այլն, այսշնի, այշշամի և այլն, այսման, այշման և այլն, այստեղ, այնտեղ, վորտեղ, ինչտեղ, այսու և այլն:

Կան բառեր, վոր վոմանք տուանձին են զրում, վոմանք միացած: Բնդհանրապես միացած պեար և զըրել այն անիսկական բարդ բառերը, վորոնց մի բաղադրիչ մասն տուանձին չի զրվում: Բնչղիս՝ վորպիսզի, յեմիր, ամենուրեմ բառերի զի, եր, ուշեմ բաղադրիչ մասերը:

Յեթե այս, այդ, այն, իմի, վոր զերանուննե-

ըս իրրե ածական զրգելով չափ, տեղ, որ զոյականների վրա՞ պահում են իրենց ինքնուրույն նշանակությունը, այն ժամանակ առանձին են զրգում, որինակ՝ բնուրեցին այն տեղը, այս տեղում ամենին այդ տեղի համար են առիւատում. վո՞ր չափովն եք չափում, այն ոք գնա՞ չես չգտի՞ց տեղեր ենք տեսել. այս ոքն որ չի բայց՝ զրցու այնին, չեկ այսեղ. այսու զրադված եմ և այլն:

**Մեկել.** Մեկեղ բառերը միացած են զրգում, յերբ մյուս, մբասին, մյատեղ բառերի խմասառվ են զործածվում. ինչպես՝ մեկեղ զնանի, մեկեղ զարծենի, մեկել ուր, մեկել տունը. իսկ յեթե նրանակում են մեկ անգամ ել, հանկարծ, վորեվի տեղ, առանձին են զրգում. որինակ՝ մեկ ել գնա (մի անգամ ել գնա), մեկ ել (հանկարծ) զարբենց, մոկ տեղ (զորեն) գնալ:

2. Յել շաղկապով կցված այնպիսի բառեր, վարոնք մի ընդհանուր խմաստ ունեն, և վորոնց բաղդազրիչ մասերը բարզության մեջ կորցնում են իրենց հատուկ նշանակությունը. այսպես՝ վորեվի, վորեվիցն, ովեմի ինչեվիցն, ինչեվի, յերեվիցն, յերեվիկ, ուրեմի, Միացած զրել և մրցելույն բառը:

3. Տասից մինչե քսան թվականները, ու շաղկապով միացած լինեն, թե վոչ. տասնումեկ, տասնեկու, տասներեք, տասնուշոր, տասնուհինգ, տասնուվեց, տասնույոր, տասնուր, տասնիննե:

**ԾԱՆՈԹ.** — Յեթե յերկրորդ բաղդազրիչը ձայ-

Նավորով և սկսվում, ու շաղկապը չգրել տան-  
եւեմ, բայց՝ տանուչորա Նպատականարմար և  
այսպիս զրել և քանից վեր թվականները

4. Առ. յեզ շաղկապով կցված այնպիսի բարդու-  
թյուններ, վորոնք բազազրվելով նոր բառեր են կաղ-  
մում, որինակ՝ այցուձի, յելեվեջ, առեվուր, ա-  
ռուտուր, յերեվել (յերեվելուրբան), յելեվ-  
մում, այլեվար (առանց այլեվարբան), առ-  
բուրեր, տանուտեր, որումնից, մբննունար և այլն:

5. Նախզիրներով կաղմված անողիսի բարդու-  
թյուններ, վորոնց մեջ նախզիրներն ինքնուրույն  
նշանակությամբ հանդես չեն գալիս. ինչպես իւներ,  
իժայց (սարն իժեր), զի՛պի, բա՛ցի, իժեար, իրուն  
(որն իրուն), իզուր, իրեւել (հանել), ինկատի  
(առնել), իրմի, իհարեկ, առայցմ, առառափեր,  
առմիօք, ընդառաջ, ընդհակառակն, ընդամներ,  
բատայն, բատայն, բատում, բախինցոն, մինչ-  
աց, մինչայդ, մինչայն (մինչի այս, այդ, այն ժո-  
մանակը), մինչզեռ, զայնզգույն, մեկենիսեկ,  
վերջինեցն, խառնիխուր, բացեիքաց, ուեցը,  
տարեցաւի, վորեւցույի, ուրասուն, ուրնկմնից,  
մերքնդմներ, մեզքնդմնից, իմբնբախինցան, ընդ-  
համնուր և նման այլ բարդություններ, վորոնցից  
շատերի միացած զրություններ, վորոնցից և ընդհանրա-  
ցած (ընդունակ, ընդարձակ, ընդպրկել և այլն):

### Առանձին - առանձին գրել

1. Առ. նախզրով կաղմված մինույն բառերի կրրե-  
նությունները: Յեթե միացած զրկեն, կհամարվեն  
նոր բառեր, յերբեմն շատ յերկար (բաղմավանկ բա-

սերի կրկնության զեղքում: Գրել՝ ժամանակ ու ժամանակ, փառ առ փոթք, ձական առ ձական, զեմ առ զեմ, բառ առ բառ, բազ առ բազ, մի առ մի և այլն:

2. Առ, յօվ շաղկապներով միացած կրկնությունները՝ զեմ ու զեմ, խոկ յօվ խոկ, տեղի ու տեղը մեկն ու մեկը և այլն, նույնպես և փոփոխությունը կրկնավորները՝ հաց ու մաց, ծուռ ու մոռ, ուռ ու մուս, սուս ու փուս, ձեմ ու ձում չեմ ու չում (անել և այլն):

3. Առ, ի, ըստ նոխղիրները յեթե զործածվում են համար (ի), զեպի (առ), համեմատ (ըստ) և այլ կապերի իմաստով, այսինքն՝ յեթե պահում են իրենց ինքնուրույն նշանակությունը: Որինակ՝ հաջարաւելի ի գիտուրյան, ի հիշատակ պահել մի բան, նու ուրեմ առ հայրենիքը, դատել ըստ ուրիմի, զննաւուել ըստ խորհի, վարձաւուել ըստ ավատանիլի:

**ԾԱՆՈԹ.**—Յենթաղբական յեղանակի կը մասնիկի համար անցյալում զրության միատեսակ ընդհանրացած ձեւ չի յեղեք Այժմ կը մասնիկը զրում են այնպիս, ինչպես չ մասնիկն է զրվում, այսինքն՝ բայերի հետ միացած՝ առանց ը տառի և տունց աղաթաթարցի:

### 3. ՀԱՐԱԴՐՅԱԼ ԲԱՌԵՐ

«Հարադրյալ բառերի բաղադրիչ մասերը միացած չեն զրվում, այլ անջատ, յերբեմն ու շաղկապով կամ զծիկով են միանում: Դրանք իմաստով մի բառ են խոկ ձեմով յերկու բառ»:

1. Փոփոխությամբ կրկնավորները՝ մանր-մանր,  
փարաս-փարաս, կրու-միոր, սեմիկ-մեմիկ, աման-  
չաման, ծակ-ծռւկ, ձանձ-մանձ, ավալ-քավալ,  
լորի-վորի և այլն, յեթե ու շաղկապով չեն կազ-  
գում:

2. Միենույն թվականների կրկնությունները, վո-  
րոնք բաշխական թվականների մաքով են զործած-  
վում. մեկ-մեկ, յերկու-յերկու, յերեք-յերեք, չորս  
չորս, հինգ-հինգ և այլն:

3. Թվականների այնպիսի կրկնություններ, վո-  
րոնք տնորոշ, մոտավոր թիվ են ցույց տալիս. մեկ-  
յերկու, յերկու-յերեք, չորս-հինգ, հինգ-վեց և  
այլն:

4. Միենույն անունների, ածականների, մակրայ-  
ների կրկնությունները. բերքել, տաֆ-տաֆ, սուր-  
սուր, փունջ-փունջ, զաւնիդ-զաւնիդ, խումբ խումբ,  
մնձ-մնձ, սեխպ-սեխպ, կամաց-կամաց, սիս-  
պիս, յերեմն-յերեմն և այլն:

5. Յերկու տարրեր բառեր, վորոնք խմաստով իր-  
քե մի բառ են տանգում. բանվորա-զյուլացիա-  
կան, հայ-բաւրբական. Շվեդ-Նորվեգիա, զիմ-  
հանդիման, հականե-հանվանելու:

6. Փոխ բառը հաջորդ զոյականի հետ, յերբ փո-  
խանորդի մաքով և զործածվում. ինչպես՝ փոխ փո-  
րիչ, փոխ-նախազանի և այլն:

### ԱՆՁԱՏ ԳՐԵԼ

1. Հարազրվող համանիշ և նույնանիշ բառերը,  
վորոնք միացած են ու շաղկապով. որինակ՝ ջարդ

ու բռւրք, ցիր ու ցան, տի ու դրազ, հայ ու մաս, ձայն ու ծագուն, լաց ու կոծ, գունդ ու կծիկ խաղբ ու խայտառակ, Կարելի յե և զծիկով մի ացնել, սուզ-օփան, հատ-կտոր, հեօս-հանգիս:

2. Առ շաղկապով միացած տարբեր նշանակություն ունեցող բառերը, վորոնց մեջ իմաստի տեսակետից վարեկ կազ կտ և հաճախ միասին մի նոր առումով են գործածվում. ինչպես՝ տուն ու տեղ, բար ու բանդ, հով ու ձիվ, ծառ ու ծուզ, ձար ու ձրագ (մի վորզի), կեր ու խում, անց ու դարձ, բաց ու խուփ, վար ու ցանի, յել ու մուտ: Կարելի յե և զծիկով միացնել, գրել-կտորակ, գնարգակ, տանել-բերել և այլն:

3. Հարազրյալ բայերը, վորոնք կտղմված են յերկու բառից, բայց մի բայի իմաստ ունեն. որինակ՝ պար գալ, բարի տալ, յերես տալ, սիրս անել, վես բերել, զլուխ տալ և այլն:

4. Ոժանդակ եմ բայը դերբայից, վորովհետեւ նախ առանձին բայ և և յերկրորդ՝ տեղին նայելով՝ դերբայից առաջ ու յետ կարող ե դրվել. որինակ՝ յես խոսելու յեմ, յես ե'լ եմ խոսելու. նա զնում ե, նա ե'լ և զնում:

## II. ԱՄԱՆՑԱԿԱՆ ԲԱՐԵՐԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ածանցական բառերը կաղմված են մի բառից՝ կամ արմատից և նշանակություն, իմաստ չունեցող մի մասնիկից, վոր կուզում և ածանց:

## ՆԱԽԱՃԱՆՑԵՐԻԳ՝

1. Սապ.—ապարդյուն, ապերախտ, ապաշնորհ, ապերադան, ապուշ:

2. ԳԵԾ,—զԺՐԱԽՄԱ, զԺՂՈՒ, զԺՂՈՒՅՆ, զԺԼԱԺՄԱԿԵՐ:

3. ՏՅ,—տՃԵ, տհԱՄ, տՎԵՄ, տՊԵՎ:

4. ԳԵԺԻԼՈՎ միացնել այն նախածանցները, վորոնք տծականների առաջին վանկերի մասնավոր փոփոխությամբ կրկնություններ են բառասկզբում՝ իմաստը ստատիացնելու համար: Որինակ՝ կաս-կառմիր, ձիմի-ձիրմակ, մին-մինակ, կափ-կանաչ, դափ-դատարկ, լիմի-լիցուն և այլն:

### ՎԵՐՉԱԾԱՑՑԵՐԻՑ՝

1. ՎՅ,—պԵՄՔ, աՀՔ, շնորհՔ, կառՔ, փառՔ, միոՔ:

2. ԵՐԵՐՔ, ՌՈՐՔ,—յԵՐԿՐՈՐԴ, յԵՐԲՐՈՐԴ (յԵՐ արմատ), չորրորդ (արմատ՝ չՈՐ), հինգերորդ, վեցերորդ, իններորդ և այլն:

3. ԱՅԻՖԻՆ,—քաղաքային, մարդկային, հարավային:

4. Ա.Ե.Բ.—տառապանք, հարգանք, զրկանք:

5. ԳԻԲԻՆ,—ահազին, ուժգին, ցնծազին, տխրազին:

6. ՅԱԱ,—փայտյա, տասնամյա, սեաչյա, պաշտոնյա:

7. ԻԿԻ,—ծխտիկ, փոքրիկ, ընթացիկ, ուռուցիկ, պառիկ:

8. ԻՀ,—բրիչ, քերիչ, կորիչ, սրբիչ:

9. ՕՌՈՒ,—սոսափյուն, հնչյուն, զոչյուն, զղբղյուն:

10. Ա.Ե.Յ.—հնչուն, զողղոջուն, կարկաջուն, թրբթըսուն:

11. Ա.Ե.Յ., ուրցուն,—սովորույթ, սովորություն, ձանձրույթ, ձանձրություն:

12. Ա.Ե. Ա.Տ., կոս,—յուղոտ, ավաղուտ, թփուտ, ամաչկոտ, պարծենկոտ:

13. Ա.Ե.ՐՔ,—ձախորդ, հաճախորդ, զնորդ, վորորդ, ձանապարհորդ:

14. Վաճ, տճ, վաճմ, — հաղվաճ, յարվաճ, մեռաճ,  
թմրաճ, հյուսվաճք, զործվաճք, նայվաճք:

15. Աւկ, — զազոււկ, զիրուկ, նորելուկ, կաբուկ,  
հեղուկ:

16. Շւիխ, — տոսուցունի, վարժունի, թաղունի:

17. Մունի, — ցուցմունիք, պատահմունիք, մտած-  
մունիք:

18. Աշեա, — խոտավիա, ծաղկավետ, սիղավետ:

19. Խի, — խաղալիք, զործիք, չարիք, վասելիք:

20. Աւեգ, — խորհուրդ, հազուրդ, խասնուրդ:

21. Աւաս, — արտաքուստ, ներքուստ, վերուստ,  
ապրուստ:

22. Աս, — ողոչառ, թերառ, թեառ:

23. Հոգնակիսում և եր մասնիկի փոխարեն եր զրել,  
յեթե բարդ բազմավանկ անունների յերկրորդ բա-  
ղադրիչը միավանկ բառ և և բարզության ժամանակ  
պահում և իր բուն խմառաբ. ինչպես՝ սեփական (ու  
հող), սեփականիք, անձեւեփանչուր (անձրեի ջուր),  
անձուեփանչեր, զուտգնիք, մարմուչյեր, գա-  
սուզգրեր, գասուկարգեր, բարածայներ, փառելոս-  
փայտեր, ծառգրեր, բազքեր և այլն. բայց՝ բարա-  
սիր (բար սիրտ ունեցող), բարախրանիր, մար-  
զասիրներ. ձկնորսներ, ցրկիրներ և այլն:

9.

### ՏԱՐԱԳԱՎԱՐՁ

Տողադարձ Ենք անում, այսինքն բառի մի մասը  
տակի տողն Ենք անցկացնում այն ժամանակ, յերբ  
տողավերջում բառն ամբողջությամբ տեղավորելու  
հնարավորություն չի լինում:

Տաղապարձի ժամանակ պետք է նկատի ունենալ.

1. Բառը պետք է կանոնավոր վանկերի բաժանել  
այսինքն՝ կանոնավոր հեգել:

2. Միավանկ բառերը կարելի չե բաժանել:

3. Յերկու ձայնավորների մեջ զանգած մեկ բա-  
զանայնը հաջորդ վանկին և անցնում. Առ-էին, ա-  
ռա-զա-վազ. հա-յի-լի:

4. Յերկու բաղաձայնից մեկը մնում է նախորդ  
վանկին, մյուսը հաջորդ վանկին և անցնում. Աբա-  
մել, սար-սափ, Փար-դան:

5. Յերեք բաղաձայնից յերկուոր մնում են նա-  
խորդ վանկին, իսկ յերրորդը հաջորդ վանկին և անց-  
նում. բարզ-մանել. անձ-ճավորություն, զար-  
ներ:

6. Թե տաղավերջում մնացած և թե հաջորդ տողն  
անցած վանկերի մեջ ը ձայնավորը զրվում է, յեթե  
արտասանվում է, գըտ-նել. օքր-բան. սրբ-սրբ-  
ջալ:

7. Բառակղըի սկ, սռ, սպ, սփ, սթ, սպ,  
ըս, զը, զգ կապակցությունները կարելի յե բաժա-  
նել. այն ժամանակ սկղըի ը ձայնավորը պետք է  
զրել. ըս-տանալ, ըս-պասել, ըս-փոփանի, ըզ-բո-  
սանի, ըս-տապել, ըս-Շողել և այլն:

«Կարելի չե բաժանել. յերբ այսպիսի բառերն  
երբեք յերկրորդ բաղազըիչ մաս մտնում են բարդ բա-  
ռերի մեջ, և կամ յերբ նախընթաց բառը ձայնավո-  
րով և վերջանում. վորովհետեւ այդ ժամանակ բառա-  
